



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yarlyan

ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող  
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Ա. Մանուչարյան  
Էլ. փոստ՝ [ggalstyan123@gmail.com](mailto:ggalstyan123@gmail.com)

**ՊՍԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ-ԱԶԳԱԿՑԱԿԱՆ  
ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ**

Հայ առաքելական եկեղեցու յոթ սրբազան խորհուրդներից մեկը ամուսնության պսակն է, որը նվիրագործում է այր և կնոջ միությունը՝ աստվածային օրհնությամբ ու կրոնական ծեսով, երբ երկու տարբեր անձնավորություններ միանում են, մշտական կենսակցական կապի մեջ մտնում՝ ըստ Քրիստոսի ու եկեղեցու օրհնակի: Պսակն ունի մարդկային ցեղի շարունակականության խորհուրդ: Մարդկային որևէ ուխտ կամ կապ չի կարող տղամարդուն և կնոջն այնքան սերտացնել, որքան պսակված ամուսնությունը: Եռամեծ Գրիգոր Տաթևացին այսպես է խոսում Պսակի մասին. «*Պսակն է արդար հատուցումն երկուց պատշաճաւոր անձանց ի մի զուգաւորութեանց: Եւ դարձեալ՝ պսակն է արդար զուգաւորութիւն առն եւ կնոջ՝ անբաժանելի պահելով զկենցաղաւարութիւնն: Արդար զուգաւորութիւն վասն այն ասի՝ որ ոչ պարտի լինել, եթէ ոչ վասն ծնանելոյ զաւակս ի պաշտօնն Աստուծոյ*» [1]:

Պսակն իր արժանի տեղն է գտել եկեղեցու խորհուրդների շարքում, որովհետև դրա կարևորությունը և հատկանշությունն ապացուցող տեղիները բազմաթիվ են սկզբում Հին, այնուհետև՝ Նոր Կտակարանում: Ամուսնության էության դրսևորման երևույթը նկատվում է հենց Ծննդոց գրքում: Աշխարհաստեղծման հինկտակարանյան առաջին պատումի մեջ մարդկանց՝ Աստծո պատկերով արարվելու փաստին անմիջապես հաջորդում է նրանց արու և էգ լինելու իրողությունը (Ծննդ. Ա. 27): Սրան միանգամից հետևում է աստվածադիր պատգամը, որով Աստված, կարելի է ասել, սահմանեց պսակի խորհուրդը, և հենց Ինքը ցույց տվեց դրա կարևորությունն ու առանձնաշնորհումը. *Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. «Աճեցե՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցե՛ք զերկիր. եւ տիրեցե՛ք դմա. եւ իշխեցե՛ք ձկանց եւ ծովու, եւ թռչնոց երկնից, եւ ամենայն անասնոց. եւ ամենայն երկրի, եւ ամենայն սողոնց որ սողին ի վերայ երկրի»* (Ծննդ. Ա. 28): Այս տողերում երևում են Աստծո հրամանն ու պատգամը երկրի բարիքներից օգտվելու և դրանց իշխելու, ընտանիք կազմելու, սերնդափոխությունն ապահովելու վերաբերյալ: Երբ Եվան սերեց Ադամի կողոսկրից, այդ ժամանակ նախաստեղծն ասաց. «*Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, եւ մարմին ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի զկին, զի յառնէ իւրէ առաւ*» (Ծննդ. Բ. 23): Հենց այդ պատճառով է, որ «*...թողէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ*» (Ծննդ. Բ. 24): **Եւ եղիցին երկուքն ի մարմին մի** (Ծննդ. Բ. 25): Այս խոսքերին որպես հավելում Մատթեոս ավետարանիչն ասում է. «*Արդ, զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեցէ*» (Մատթ. ԺԹ. 6): Նորկտակարանյան հաջորդ հատկանշական հատվածը, որը խոսում է նշյալ խորհրդի

ելության և առանձնահատկության մասին, Հովհաննեսի ավետարանում ներկայացված Կանայի հարսանիքն է, ինչին անձամբ մասնակցում է Հիսուս Քրիստոսը, և որտեղ Նա կատարում է իր աստվածային առաջին հրաշագործությունը՝ ջուրը վերածելով գինու (Հովհ. Բ. 1-12): Պողոս առաքյալը երբայեցիներին ուղղված իր թղթում հետևյալ գնահատականն է տալիս պսակի ամուսնության խորհրդին. «Պատրուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ անկողինք. բայց զշունս եւ զպոռնիկս դարձ Աստուած» (Եբր. ԺԳ. 4): Իսկ եփեսացիներին հղված իր թղթում նա հորդորում է կանանց հնազանդ լինել իրենց ամուսիններին, որովհետև կնոջ գլուխն ամուսինն է, ինչպես Քրիստոսն է եկեղեցու գլուխը, իսկ ամուսիններին ցուցում, որ սիրեն իրենց կանանց, ինչպես Քրիստոսը սիրեց եկեղեցին և Իր անձը մատնեց նրա համար (Եփ. Ե. 22-23, 25): Եվ հիրավի, տղամարդու և կնոջ հարաբերությունը միմյանց նկատմամբ լավագույնս իր արտահայտությունն է գտնում Քրիստոսի ու եկեղեցու համեմատական կապի առնչությամբ: Կորնթացիներին գրված իր առաջին թղթում առաքյալն ամուսիններին և այրիներին խորհուրդ է տալիս լինել իր պես՝ չամուսնանալ, բայց եթե նրանք ժուժկալություն չունեն, թող ամուսնանան, «...զի լաւ է ամուսնանալ, քան զջեռնուլ [2]՝» (Ա Կորնթ. Է. 8): Նույն այդ թղթում առաքյալն առանձնապես արժևորում է հանգամանքը, երբ թույլ է տալիս քրիստոնյային ապրել հեթանոսի հետ՝ հուսալով, որ խորհրդի շնորհով անհավատը մաքրագործված կլինի (Ա Կորնթ. Է. 14):

Պսակադրությունը կատարում է օձյալ հոգևորականը, իսկ խորհրդակատարության վայրը եկեղեցին է: Այն իրագործվում է, երբ չկա արգելող որևէ օրենք, և համապատասխանում է եկեղեցական կանոնադրությանը: Ստորև նշենք դրանցից մի քանիսը. ա) փոխադարձ սեր, որը հաստատվում է նորապսակների կողմից եկեղեցում, բ) նրանց միությանը պետք է համաձայն լինեն երկու կողմի ծնողներն էլ, գ) նրանք պետք է ունենան եկեղեցական կանոնների հիման վրա հաստատված չափահասություն, դ) պետք է որևէ մեկի կողմից բռնություն չգործադրվի պսակի կատարման համար, ե) պսակը անթույլատրելի է, եթե ամուսիններից որևէ մեկը կապված է ինչ-որ մեկի հետ պսակով, ու այն դեռ լուծարված չէ, զ) եթե պսակվող փեսան կուսակրոն է, է) եթե կարգը կատարվում է անթույլատրելի օրերում, ը) եթե կա դավանական կամ կրոնական որևէ արգելք, և վերջապես թ) եթե կա ազգակցական, խնամական կամ կնքահայրական չհասություն [3]: Ստորև, ըստ մեր աշխատանքի թեմայի, կանգ կառնենք արյունակցական-ազգակցական կապերի արգելքներին՝ տեսնելով, թե ինչ ընթացք է ունեցել այս խնդիրը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Ազգակցություն համարվում է անձանց մեկը մյուսից կամ ընդհանուր նախնիից սերելու արյունակցական կապը: Ազգակցությունն անձանց արյունակցական ընդհանրությունն է [4]: Այն լինում է մերձավոր և հեռավոր: Ազգակցության մոտ կամ հեռու լինելը որոշվում է ազգակցության աստիճանով: Զարմ կամ սերունդ է կոչվում մեկ

<sup>1</sup> «Ջեռնուլ» բառացի նշանակում է «սաստիկ տաքանալ», «կրակ կտրել», «բորբոքվել», իսկ փոխաբերական իմաստով՝ «մարմնական ցանկությամբ համակվել»: Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանության մեջ այս բառը թարգմանվել է «կրքով այրվել» ձևով:

անձի հեռավորությունը մյուսից՝ ըստ ծննդի: Ազգակցության աստիճանը հաշվելիս պետք է սկսել կապող անձից, այսինքն՝ այն մարդուց, ում հետ հարաբերությամբ որոշվելու է արյունակցական հեռավորությունը: Հայրը և մայրը չեն համարվում առանձին աստիճան, քանի որ ըստ աստվածադիր օրենքի՝ նրանք մի մարմին են համարվում (*Ծննդ. Բ. 24*): Աստիճանները միմյանց կապվում են գծով: Այդ գիծը լինում է **ստորագիծ**, երբ կապող անձից սկսած՝ ծնունդները հաշվում ենք դեպի ներքև, օրինակ՝ պապ, որդի, թոռ, ծոռ, թոռնեթոռ, կոռ, **վերագիծ**, երբ հաշվում ենք դեպի վեր, օրինակ՝ ծոռ, ծոռան հայր(թոռ), ծոռան պապ(պապ), ծոռան պապի հայր(որդի), **կողագիծ**, օրինակ՝ հորեղբոր որդիներ, մորաքրոջ աղջիկներ և այլն [3]:

Մերձավոր ազգականների ամուսնությունն ու կենակցությունն արգելող օրենքներից առնչվում ենք Ղևտացվոց գրքում՝ տրված Մովսեսի կողմից: Վերջինս հստակ հրամայում է չմոտենալ իր հորը, մորը, հարազատ կամ խորթ քրոջը, թոռանը, հորաքրոջը, մորաքրոջը, հորեղբորը և սրա կոնջը, որդու կոնջը՝ հարսին, նրա որդու աղջկան, եղբոր կոնջը, եղբոր աղջկան կամ որդուն, եղբոր թոռանը, քենուն՝ կենակցելու կամ ամուսնանալու նպատակով (*Ղևտ. ԺԸ. 6-18*): Սրանից հետևում է, որ Մովսեսը դրեց չորրորդ զարմի արգելք: Այստեղ մեր ուշադրությունից չի վրիպել մի հետաքրքրական փաստ. Մովսեսի սահմանած ազգակցության արգելքը կապված է միայն կապող անձի հետ, այսինքն՝ ի տարբերություն դեպքերի, որոնց մասին առավել մանրամասն կխոսենք ներքոնշյալում, նա չի սահմանում, որ չեն կարող ամուսնանալ երկու եղբոր թոռներ կամ երկու եղբոր ծոռներ, այլ միայն արգելվում է կապող անձի պսակն իր ազգակիցների հետ՝ թույլ չտալով պսակվել մինչև իր ծոռը և եղբոր թոռը: Եվ հենց այստեղ է, որ երևում է չորրորդ զարմի արգելք: Հայաստանի հնագույն պատմության մեջ նկատելի է եղբոր ու քրոջ ամուսնություն: Այսպիսի զույգի ակնառու օրինակ են հայոց թագավոր Տիգրան Դ-ն և Էրատոն, որոնք և՛ քույր ու եղբայր էին (Էրատոն Տիգրան Դ-ի խորթ քույրն էր. նրանք համահայր էին), և՛ ամուսին ու կին: Հ. Մանանդյանը նկատում է, որ եղբոր ու քրոջ ամուսնությունը թույլատրելի էր զրադաշտական կրոնով և հունական որոշակի օրենսդրությամբ [5]: Հաշվի առնելով այն փաստը, որ այդ ժամանակաշրջանում (Ք. ա. I - Ք. հ. I դդ) մեր նախնիները հեթանոսներ էին՝ պարզորոշ է դառնում այդպիսի միության անխոտելիությունը հեթանոսական կրոնով: Այն ոչ միայն գարշելի ու արգահատելի երևույթ էր հայոց մեջ, այլև խոչընդոտում էր առողջ սերնդափոխության ապահովումը: Սակայն օբյեկտիվ լինելու համար նշենք, որ դա երկնային կամ ծիսական ամուսնություն էր և հասարակ ժողովրդի մեջ տարածում չի ունեցել:

Հիմա փորձենք պատմության թոհուրոհի մեջ տեսնել այս երևույթի արտացոլման դրվագները՝ ըստ ժամանակագրական կարգի: Առաջին հանգրվանը Առաքելական ժողովն է, որի ԼԳ. կանոնն ամբողջությամբ առնչվում է մեր խնդրին: Այս կանոնը վավերացնում է Մովսեսի տված պատգամը՝ պահելու չորրորդ զարմի ազգականության արգելքը. «*Մարդ ոք մարդ առ ամենայն ընտրութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի, յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ, զառականս դստեր քոյ մի՛*

*յայտնեսցես, զառականս քեռ քոյ՝ թէ առ ի հարէ իցէ կամ առ ի մարէ մի՛ յայտնեսցես, զառականս կնոջ հար քոյ մի յայտնեսցես, զառականս հարաքեռ քոյ մի՛ յահտնեսցես, զառականս քեռորոյ քոյ մի յայտնեսցես՝ պղծելով ընդ նոսա»* [6]: Հետաքրքրական է, որ կանոնը սահմանում է Մովսեսի տված օրենքների վավերացում, բայց այստեղ հստակորեն երևում է միայն առաջին, երկրորդ և երրորդ զարմերի արգելք: Համենայն դեպս, թվարկված ազգակցական կապում չի նկատվում չորրորդ զարմի արգելք: Նպատակահարմար է նշել, որ առաջին զարմ է հաշվվում ամուսնությունը հոր ու դստեր, մոր ու որդու և հոր ու հարսի (որդու կնոջ) միջև: Հոր ու հարսի ամուսնության պարագայում առաջին զարմ դիտվելը պայմանավորված է հարսի և որդու մեկ մարմին համարվելու հանգամանքով: Երկրորդ սերունդը դիտվում է քրոջ ու եղբոր, խորթ քրոջ ու եղբոր, խորթ եղբոր ու քրոջ, եղբոր ու եղբոր կնոջ, քրոջ ու քրոջ ամուսնու միջև: Իսկ երրորդ զարմ ասելով՝ պետք է հասկանալ հորաքրոջ, մորաքրոջ, քեռու, հորեղբոր, քրոջ դստեր, քեռորդու, եղբոր դստեր, եղբոր որդու հետ ազգակցական կապը: Այստեղ չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ երրորդ զարմի մեր նշած ազգակցությունը հաշվվում է կողագիծ ձևով: Երրորդ զարմ է համարվում նաև ծոռը՝ հաշված պապից՝ ստորագիծ կերպով: Հատկանշական է, որ Ն. Մելիք Թանգյանն ուշադրության արժանի է համարում այն փաստը, որ քրիստոնյաներն այս կանոնով կարծես հետևում են հրեականությանը, բայց զարմանալի ոչինչ չկա սույն հանգամանքում, քանզի Քրիստոսն ինքը պատգամեց, որ *«Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ»* (Մատթ. Ե. 17): Նույնիսկ Հովհաննես Մկրտիչը հետևում էր Մովսեսի տված օրենքին. նա նախատում է Հերովդես չորրորդապետին այն պատճառով, որ վերջինս ապօրինաբար կնության էր առել Փիլիպոսի՝ իր եղբոր կնոջը՝ Հերովդիային (Մատթ. ԺԴ. 3-4):

Մեզ հայտնի կանոնական առաջին որոշումը հայոց իրականության մեջ կայացրել է Ներսես Մեծ կաթողիկոսը՝ պսակի պարագային սահմանելով արյան ազգակնության հեռավորություն մինչև հինգերորդ զարմ: Այդ կապակցությամբ կանոնախմբի ԻԲ. կանոնում մասնավորապես կարդում ենք. *«...ցհինգորորդն մի՛ իշխեսցէ, եւ զչորրորդն ապաշխարեսցէ, եւ երրորդքն մեկնեսցին եւ ապաշխարեսցեն»* [7]: Ի դեպ, կանոնում հստակ նշված չէ, թե չորրորդ զարմի արգելք ասելով՝ ինչպես են կատարել հաշվումը, քանի որ օրինակներ նշված չեն: Բայց ենթադրելի է, որ կանոնը կրկին վավերացրեց Մովսեսի տված պատգամը ու հաշվումը կատարեց հենց այդպես:

Հայոց մեջ կանոնական հաջորդ որոշումը սահմանվել է Շահապիվանի 444 թ. ժողովում: Կանոնական ԺԳ. որոշումը մասնավորապես ասում է. *«...Արդ՝ մի՛ ոք որ զաստուպաշտութիւն եւ զքրիստոնէութիւն զգեցեալ եւ զտէրունական մկրտութիւն՝ զկնիք եւ զդրոշմ զարքունական, զքոյր կամ զքեռորդի կամ զեղբաւորդի կամ զհարաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն կին զոք մի՛ իշխեսցէ առնել...»* [6]: Ի տարբերություն Առաքելական ժողովի ԼԳ. որոշման, որտեղ նշվում էր ազգակցական նույն չհասությունը, Շահապիվանի ժողովի վերոնշյալ կետում հստակորեն տրվում է ոչ թե չորրորդ, այլ երրորդ զարմի արգելք՝ թույլատրելով



չորրորդ զարմի ամուսնությանը: Փաստորեն, Շահապիվանի ժողովը մեկ աստիճանով իջեցրել է արգելքը: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ բազմիցս խախտվել է կարգը, և եկեղեցին ուղղակի այն կանոնականացրել է: Նույն աստիճանի չհասության արգելքի հաջորդ հանգրվանը Վաչագան Բարեպաշտի սահմանադրության Ժ. կանոնն է. «Այր՝ զերրորդ ազգի կին մի՛ արասցէ, եւ զեղբարի կին մի՛ արասցէ» [7]: Երրորդ սերնդի չհասության արգելքի անընդհատ կրկնումը տարբեր ժողովներում հուշում է կարևորագույն այն փաստի մասին, որ այդ կանոնը, չնայած արգելումներին, չի պահվել, և խախտվել է ազգակցական-արյունակցական մերձամուսնությունը թույլ չտվող պատգամը՝ դեռևս տրված վաղնջական ժամանակներից: Այս նույն արգելքին հանդիպում ենք նաև Պարտավի 786 թ. Բ. ժողովի ԺԶ. կանոնում: Կարող ենք եզրակացնել, որ մինչև 8-րդ դարի կեսը չի պահվել արյան ազգակցության երրորդ զարմի արգելքը, ինչի պատճառը, կարծում ենք, զրադաշտ պարսիկների ու մուսուլման արաբների երկարատև տիրապետությունների ազդեցություններն էին հայոց վրա. այդ ժողովուրդների կրոններով արյունակցական-ամուսնական սահմանափակումները շատ ավելի նեղ էին:

Վ. Հակոբյանը նկատում է, որ եթե Առաքելական, Շահապիվանի և Վաչագանի վերոնշյալ կանոններում խնդիրը վերաբերում է հասարակության բոլոր խավերին, ապա Պարտավի ժողովում հատկապես շեշտվում է իշխանների մերձամուսնության փաստը. «Այժմ առ մեք լուծեալ տեսանեմք, մանաւանդ յազատաց, զկանոն հարցն, զի անխտիր խառնին առ իրեանց մերձաւորսն անկարգ ամուսնութեամբ: Յայսմհետէ ի չորրորդ զարմ մի՛ իշխեսցեն ամուսնութեամբ գուգիլ...» [9]: Պատվիրանը խախտելու դեպքում նրանց սպասվում էր նզովվում և այն, որ պատասխան պիտի տային Աստծո դատաստանի ժամանակ:

Այս խնդրին մանրամասնորեն անդրադարձել է Ներսես Շնորհալի կաթողիկոսն իր «Թուղթ ընդհանրական»-ում: Նա մասնավորապես նշում է. «Մի՛ որ համազգեսց՝ որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ, այլ մինչեւ ի յերկուց կողմանցն զչորրորդ ազգին գլխաւորութիւն կատարեալ ունիցին» [10]: Իսկ թե ինչու են եկեղեցու հայրերը կանոնադրել չորրորդ զարմի սահմանը, այսպես է բացատրում Շնորհալին. «Քանզի բնուի մարմնոյ ի չորից տարերաց գուլավ՝ յիրաւի եւ մարմնական ազգակցութիւն մինչեւ ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հարէ երկուց եղբարց բաժանեալ՝ հաւասար ունին յինքեանս զհարն գոյացութիւնս. իսկ առ ի նոցանէ ծնունդքն՝ զկէս արեան եղբայրութեանն. եւ երրորդ ծնունդն՝ որ յեղբարցն որդոց, զկիսոյն յէս արեանն միայն. իսկ չորրորդ ծնունդն՝ որ ի սոցանէ, զչորեակ մասն արեանն մնացելոյ: Եւ այս է սահման եւ կէտ արեան մերձաւորութեան» [10]: Սրանից պետք է եզրակացնել, որ Շնորհալին դրեց չորրորդ զարմի արգելք՝ թույլ տալով հինգերորդ սերնդի ամուսնությունը: Սակայն չափազանց կարևոր է այն խնդիրը, որ նրա կողմից հաստատված չորրորդ զարմի արգելքն ամբողջապես տարբերվում էր Մովսեսի տված կրկին նույն հեռավորության սերնդի ամուսնությունը չթույլատրող օրենքից: Հայոց կաթողիկոսը, չորրորդ սերնդի արգելքը տալով, թույլ է տվել պապի երկու տարածյուղ

կոռների ամուսնությունն այն դեպքում, երբ երկու եղբոր թոռները էին: Այսինքն՝ նա թույլատրել է իններորդ և տասներորդ աստիճանների ամուսնությունը: Ասվածը հասկանալի դարձնելու համար բերենք ճյուղագրությունը. եթե կապող անձ ընդունենք պապին, ապա նրանից հետո պետք է հաշվել իր որդիներին (I և II աստիճաններ), թոռներին (III և IV աստիճաններ), ծոռներին (V և VI աստիճաններ), թոռներոռներին կամ առներին [11] (VII և VIII աստիճաններ), կոռներին (IX և X աստիճաններ): Կարևոր է նշել, որ չորրորդ զարմի արգելք ասելով՝ պետք է նկատի ունենալ, որ թույլատրելի չէ ամուսնությունը պապի երկու թոռների (տարբեր որդիների զավակների), կապող անձի ամուսնությունն իր եղբոր կամ քրոջ թոռան հետ: Իսկ հինգերորդ սերնդի արգելք ասելով՝ կարելի է հասկանալ պապի՝ թոռան և ծոռան ամուսնության անթույլատրելիություն, ինչպես նաև կապող անձի ամուսնությունն իր եղբոր կամ քրոջ ծոռան կամ իր թոռներոռան հետ, չնայած պարզ է մի հանգամանք, որ վերջին երկու դեպքերը ֆիզիկապես անհնարին են: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Շնորհալի իր նշյալ աշխատության մեջ սահմանում է նաև ամուսնության թույլատրելի տարիք՝ տղաների համար 15, իսկ աղջիկների համար՝ 12 տարեկան [10]:

Չորրորդ զարմի արգելք հանդիպում է նաև Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության մեջ, որտեղ հեղինակը թույլատրում է հինգերորդ սերնդի ամուսնություն՝ նկատի ունենանով իրողությունն այնպես, ինչպես ասել է Ներսես Շնորհալին. «...նոցա զայս ւսանդեսցես. սկիզբն ի հինգերորդէն յառաջ, քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ՝ զսահմանն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է, որում տեղեակ է քո սրբութիւնդ» [12]:

Մեր ուսումնասիրությամբ կանոնական վերջին որոշումը հայոց մեջ եղել է Սսի 1243 Բ. ժողովում, որի Ը. կանոնը սահմանում է. «Ձպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսային մի՛ պակաս քան զչերեքտասան ամն, եւ հարսն՝ քան զերկեստասան» [13]: Կանոնական որոշումից պարզ է դառնում, որ ամուսնության թույլատրելի սահման է համարվում յոթերորդ սերունդը, այսինքն՝ կարող են ամուսնանալ նույն պապի մի տղայի թոռը և մյուս որդու ծոռը կամ ուրիշ ձևակերպումամբ՝ մի ծոռը և մյուս թոռներոռը: Կարևոր է նաև այն խնդիրը, որ այստեղ մեկ տարով իջեցվում է Շնորհալու սահմանած տարիքային շեմը՝ 14 տարեկանը: Ինչպես տեսնում ենք, Սսի Բ. ժողովը զանց է առել Ներսես Շնորհալու սահմանած կարգը, որի պատճառը, կարծում ենք, մոնղոլական արշավանքներով պայմանավորված մարդկային անդառնալի կորուստներն էին: Ուշագրավ է փաստը, որ Ձագավանի 1270 թ. ժողովի հասարակաց կանոնախմբի Գ. Կանոնով փեսացուի ու հարսնացուի համար տարիքային շեմեր են սահմանվում համապատասխանաբար 15 և 14 տարեկանը, սակայն թույլ է տրվում հարսին ամուսնանալ 12-ում [14]: Տեսանելի է, որ վերականգնվել է Ս. Ներսես Շնորհալու սահմանածը՝ որոշակի խմբագրմամբ: Հարկ էր ապահովել սերնդափոխությունը: Ակներև է, որ այդ տարիքներն այսօր շատ նվազ են, և Ընտանեկան օրենսգրքի տասներորդ հոդվածն ամուսնացողների համար սահմանում է 18 տարեկան հասակ: Սակայն նշվում է, որ անձը կարող է ամուսնանալ

17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Նաև նշվում է, որ անձը կարող է ամուսնանալ 16 տարեկանում, եթե կա վերոնշյալ անձանց համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձն առնվազն 18 տարեկան է [15]:

Սսի Բ ժողովի որոշումը արյան հեռավորության մասին հայոց մեջ գործածական մնաց բավական երկար՝ շուրջ յոթ դար: Ժողովրդի մեջ շատ տարածված է «օխտը պորտի» գաղափարը: Ինչպես նշում է Ն. Մելիք-Թանգյանը՝ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը 1899 թ. դեկտեմբերի 17-ին Սինոդին թույլ է տալիս ազգակցական յոթերորդ աստիճանում պսակվելու հրաման տալ: Իսկ արդեն նույն որոշումը 1900 թ. փետրվարի 24-ին կրկնում է կոնդակով [3]: Փաստորեն Խրիմյան Հայրիկը վավերացրել է Սսի 1243 Բ ժողովի համապատասխան կանոնը: Պատճառը նշյալ խնդրում կատարված զանազան արատներն ու օրինազանցություններն էին:

Մեր հետագա արպտումները հանգեցրին այն եղելության վերհանմանը, որ խնդրի շուրջ հաջորդ որոշումը կատարվել է 1919 թ. օգոստոսի 28-ին, երբ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցն ազգակիցների միջև մերձամուսնության արգելքն իջեցրել է հինգերորդ աստիճանի, այսինքն՝ թույլատրել է վեցերորդ զարմի ամուսնությունը [16]: Դա, փաստորեն, մեկ աստիճանով նահանջ էր նախորդ որոշումների համեմատ: Պատճառները խիստ ակնառու են. մարդկության դեմ 1915 թ. կատարված հանցագործության՝ Հայոց մեծ եղեռնի մեկ ու կես միլիոն հայության և Առաջին աշխարհամարտում զոհված հայորդիների անդառնալի կորուստները: Հայ ազգին անհրաժեշտ էր ժողովրդագրական վերարտադրություն՝ շարունակականությունն ապահովելու և սերնդափոխությունը պահպանելու համար: 1919 թ. օգոստոսի 28-ի սահմանված կարգը ցորս վերջին ու անփոփոխ երևույթն է: Ազգագրագետ Լիլյա Վարդանյանը իր «Տավուշցիների ընտանեկան ծիսակարգը» աշխատությունում նշում է, որ մեր օրերում ամուսնության ժամանակ բարեկամների միջև յոթ զարմ պահելու սովորույթն արդեն խստորեն չի պահվում, և ընդունելի է համարվում ազգակցությունը մինչև չորրորդ զարմ [17]: Ասվածից պարզ է դառնում, որ դեռևս կան բնակավայրեր, որտեղ չի պահվում եկեղեցական կարգը, և խորհրդային անաստվածության ազդեցությամբ մարդիկ չեն կատարում աստվածադիր պատգամը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Գիրք Հարցմանց երիցս երանեալ Սուրբ Հօրն մերոյ **Գրիգորի Տաթևացոյն**, Կ. Պօլիս, 1729, էջ 609:
- [2] **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, հատոր Բ, Երևան, 2000, էջ 428:
- [3] **Մելիք Թանգյան Ն.**, Հայ եկեղեցական իրավունքը, Էջմիածին, 2004, էջ 911-2, 919, 529:
- [4] «Հայաստանի Հանրապետության Ընտանեկան իրավունք», Երևան, 2008, էջ 94:

- [5] **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Երևան, 1977, էջ 292:
- [6] «Կանոնագիրք հայոց», հատոր Ա, աշխատասիրութեամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 48, 446-7:
- [7] «Կանոնագիրք հայոց», հատոր Բ, աշխատասիրութեամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 260-1, 96, 12:
- [8] Թուղթ ընդհանրական Արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն **Ներսիսի Շնորհալոյ**, Ս. Էջմիածին, 1868, էջ 85, 84:
- [9] **Մալխասեանց Ա.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 230:
- [10] **Գոշ Մ.**, Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 386:
- [11] **Գանձակեցի Կ.**, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961, էջ 304-5:
- [12] «Ձագավանքի ժողովը և իր կանոնքը», առաջաբանը և թարգմանությունը Ս. Մխիթարյանի, «Հայ աստվածաբան», Ե, Երևան, 2013, էջ 106:
- [13] «ՀՀ Ընտանեկան օրենսգիրք», ՀՕ-123-Ն, ՀՀՊՏ 2005, 01, 19/4(376), 09.11.2004:
- [14] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք ԺԳ, Երևան, 2005, էջ 495:
- [15] **Վարդանյան Լ.**, Տավուշ, Սոցիալ-մշակութային գործընթացներ, 2014, էջ 171:

Գալստյան Գոռ

**ՊՍԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ-ԱԶԳԱԿՑԱԿԱՆ  
ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ**

**Բանալի բառեր՝** պսակ, խորհուրդ, խորհրդակատարություն, արգելք, աստվածաբանական, ուսումնասիրություն, քննություն, պատմահամեմատական, ընթացք, արյունակցական-ազգակցական:

Ներկայումս ոչ միայն աստվածաբանական, այլև պատմաիրավական ու ազգագրական տեսանկյուններից չափազանց կարևոր է պսակի խորհրդակատարության արգելքների ուսումնասիրությունը, որին էլ միտված է սույն աշխատանքը: Կատարված քննությամբ վեր է հանվում պսակի խորհրդի էությունը, պատմահամեմատական վերլուծությամբ ներկայացվում է արյունակցական-ազգակցական կանոնական արգելքների փոխհարաբերությունների ամբողջ ընթացքը՝ վաղնջական ժամանակներից ընդհուպ մեր օրերը: Բերվում են նաև զարմերի հաշվարկման տարբեր եղանակներ:

Галстян Гор

## **КРОВНОРОДСТВЕННЫЕ ЗАПРЕТЫ У АРМЯН ПРИ СОВЕРШЕНИИ ТАИНСТВА ВЕНЧАНИЯ**

**Ключевые слова:** венчание, таинство, совершение таинства, запрет, богословский, изучение, исследование, сравнительно-исторический, процесс, кровнородственный.

В настоящее время изучение запретов совершения венчания является чрезвычайно важным не только с точки зрения богословия, но и с позиции историко-юридических наук и этнографии. Этой проблеме и посвящена данная работа. Проведенным исследованием раскрывается сущность таинства венчания, и путем сравнительно-исторического анализа представляется весь процесс взаимоотношений кровнородственных канонических запретов, начиная со стародавних времен до наших дней. Также приводятся различные способы расчета поколений.

Galstyan Gor

## **KINSHIP PROHIBITIONS OF THE SACRAMENT OF HOLY MATRIMONY AMONG ARMENIANS**

**Key words:** Holy Matrimony, sacrament, ritual, prohibition, theological, study, research, historiographic, process, kinship.

Nowadays, the study of the prohibition of Holy Matrimony is extremely important not only from theological, but also historical and legal, as well as ethnographic aspects that the article puts the stress on. The essence of the sacrament of Holy Matrimony is shown through careful examination, and the whole process of relations between canonical kinship prohibitions from ancient times till now is shown through the historiographic research. We also present different methods for the counting of generations.